Արշակ Չոպանյան

Ադամի վիշտը

Լեռներու ստորոտ, մարմանդին վրա,
Շուքին տակ ծառի մը բազկատարած,
Վճիտ առվակի մը մոտ արծաթյա,
Եվա մեղմորեն էր ընկողմանած:

Բոցակեզ արևն հորիզոնեն վեր
Կելլեր հաղթական. զեփյուռն անուշակ
Կպարզեր օդին մեջ փափուկ թևեր,
Վարդը կխնկեր, ու կերգեր սոխակ:

Բայց ո՛չ արևին, ո՛չ ծաղիկներուն
Կնայեր Եվա. ուժով կսեղմեր
Իր թևերուն մեջ մանկիկ մը սիրուն,
Խնձոր այտերով, խաժակն, ոսկեհեր:

Կշարժեր անդուլ մանկիկն անհանդարտ,
Խաղալով մանրիկ մատերովն իր մոր
Գանգուրներուն հետ. և ան, գոհ, զվարթ
Կհամբուրեր զայն, ժպելով անոր:

Ծառի մ՝ ետևեն Ադամ կ՝դիտեր
Այդ պատկերն աղու և շնորհալի,
ՈՒ լուռ, տրտմությամբ լեցված, կխորհեր՝

Աչքն իր մանկիկին հառած ծաղկատի:

Հանկարծ արցունքով աչքերը լեցան,
Հառաչ մը կուրծքեն թռավ թաղծալիր,
Ճակտին զարկավ ձեռն ու շեշտով մը դառն՝
"Տե՛ր, - ըսավ, - ինչո՞ւ մայր մ՚ինձ չտվիր":